«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ **ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Հետազոտող ուսուցիչ՝ Դոնարա Սաղաթելի Բադալյան

Մեծամորի թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ

Մենթոր ուսուցիչ՝ Գևորգյան Մարգուշա

ԱՐՄԱՎԻՐ- 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Գլուխ.1 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1.1 Լեզվական կարողությունների և հմտությունների կողքին սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացումը անգլերենի դասավանդման ընթացքում……5

1.2 Սովորողի ինքնուրույնության ու նախաձեռնողականության զարգացումը դպրոցում՝որպես ուսուցչի առաջնային նպատակ……10

Եզրակացություններ……15

Առաջարկություններ……16

Օգտագործված գրականության ցանկ……17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես գիտենք, արդի կրթական համակարգը սահմանում է նոր կարողունակությունների համակարգ թե՛ սովորողների, թե՛ դասավանդողների համար: Ինովացիոն տեխնոլոգիաների ներդրումը դպրոցում իր հետ բերել է բազմաթիվ հրամայականներ, և կրթական ոլորտը ամենօրյա ռեժիմով արդիականացվում է, ընդ որում՝ ոչ միայն դասավանդողներն են զինվում համապատասխան նոր մեթոդամանկավարժական գիտելիքներով, այլև գնալով փոխվում է նաև սովորողի դերակատարումը: Բարփոխումների ֆոնին՝ վերարժեվորվել են նաև բոլոր ուսումնական առարկաների դասավանդման նպատակներն ու վերջնարդյունքները:

Անհերքելի փաստ է, որ օտար լեզուները ընդլայնում են սովորողի աշխարհայացքը, նպաստում հաղորդակցման և հանրամշակույթային կարողությունների ձևավորմանը, լեզվական նորմերի ընկալմանը: Հանրակրթական դպրոցում օտար լեզվի դասավանդումը ինչպես աջակցում է սովորողների ընդհանուր խոսքային կարողությունների զարգացմանը, այնպես էլ վերջիններիս մոտ ձևավորում նոր հմտություններ ու կարողություններ: Հաշվի առնելով արդի աշխարհում օտար լեզու իմանալու կարևորությունը՝ հստակ կարող ենք նշել, որ սովորողների մեջ բավականին մեծ է մոտիվացիան որքան հնարավոր է շատ գիտելիք ամբարելու այս կամ այն օտար լեզվից: Սովորողի համար շոշափելի հաղթանակ է օտար լեզվով ազատ հաղորդակցվելու կարողությունը: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ այս վերջնարդյունքը պահանջում է երկարատև ու համակարգված աշխատանք, որտեղ կարևոր են և՛ սովորողի նախաձեռնողականությունն ու մոտիվացիան, և՛ ուսուցչի մասնագիտական որակները:

Վերը նշած համագործակցության կայացման և ցանկալի վերջնարդյունքի հաստատմանը մեծապես կարող է օգնել կրթական համակարգի արդիականացումը: Ինտերակտիվ մեթոդների ներդրումը, ՏՀՏ բաղադրիչի կիրառումը դասի ժամանակ ավելի արդյունավետ ու արգասաբեր կարող է դարցնել բուն ուսուցման գործընթացը:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ նորարարություններով պայմանավորված կրթական բարենպաստ միջավայրի ստեղծումը, սովորողի համար ստեղծում է անհրաժեշտ ազդակներ, որպեսզի դասապրոցեսը դիտարկվի ոչ թե հարկադրանք, այլ սեփական հաետաքրքրությունները, գաղափարներն ու ներուժը համակարգելու ու տեսանելի արդյունք ստանալու հարթակ:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Քանի որ դպրոցում ուսումնական ծրագրերը, հատկապես միջին և ցածր կարողությունների տեր աշակերտների համար հիմնականում ստեղծում են որոշակի խնդիրներ, այդ իսկ պատճառով կարծում ենք , որ ինովացիոն տեխնոլոգիաների ներդրումը կրթական համակարգ լուծում է մի քանի հիմնախնդիրներ: Արդյունքում՝ սովորողն ինտեգրվում է դասի մեջ՝ զուգահեռ ձեռք բերելով ինքնուրույնություն, նախաձեռնողականություն, ստեղծարար մտածողություն: Հենց այս արդյունքի դրական ելքով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Սույն հետազոտության նպատակն է շեշտադրել ակտիվ ու աշակերտակենտրոն դասի դերը սովորողներ համագործակցային, նախաձեռնողական ստեղծագործական և այլ կարողությունների ձեռքբերման ու զարգացման գործում, ինչպես նաև ցույց տալ անգլերեն առարկայի դասավանդման շրջանակներում ուսուցչի դերը վերը թվարկած կարողությունները ձևավորելու հարցում:

Հետազոտության խնդիրը: Հետազոտության խնդիրն է սահմանել դասի ընթացքին սովորողի ներգրավվածությունը, վերջինիս նախաձեռնողական գործելաոճն ապահովելու համար ուսուցչի կողմից կատարելիք քայլերը, ինչպես նաև արդի կրթական նորարարությունների դերը այդ համատեքստում:

ԳԼՈՒԽ.1 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1.1 Լեզվական կարողությունների և հմտությունների կողքին սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացումը անգլերենի դասավանդման ընթացքում

Ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր կրթության գլխավոր նպատակներից մեկն է: Սովորողների ստեղծագործական մտածողության, կարողությունների ձևավորումն ու զարգացումը մասնավորապես անգլերենի դասերին ևս դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Սովորողների ստեղծագործական մտածողությունը կարևոր հանգամանք է ժամանակակից աշխարհում նորանոր հաջողություններ ունենալու, առկա խնդիրներին հեշտ լուծումներ տալու, նոր գաղափարներ իրականացնելու հարցում:

Հայտնի է, որ օտար լեզուն, որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը, ուստի և օտար լեզվի դասավանդման ընթացքում կարելի է սովորողի մոտ զարգացնել մի շարք այլ լրացուցիչ կարողություններ: Սակայն, ինչպես գիտենք, ուսումնական գործընթացի արդյունավետությունը կախված չէ միայն շահառու մեկ կողմից: Միայն սովորողի կամ բացառապես ուսուցչի ջանքերով հնարավոր չէ հաջողել: Այս համատեքստում կարևոր կլինի ասել, որ դասավանդման մի շարք հնարների, զանազան գործիքների կիրառումը ուսուցչին թույլ են տալիս կառավարելի դարձնել դասարանը: Եթե դասը հետաքրքիր է, ակտիվ , ապա սովորողը հաճույքով է մասնակցում դասին:

Օտար լեզուները ընդլայնում են սովորողի աշխարհայացքը, նպաստում է հաղորդակցման և հանրամշակույթային կարողությունների ձևավորմանը, լեզվական նորմերի ընկալմանը և գիտակցմանը, ինչպես նաև աջակցում են սովորողների ընդհանուր խոսքային կարողությունների զարգացմանը: Այս ամենը նպաստում է դպրոցականների լեզվաբանական կրթության հիմունքների ձեւավորմանը: Օտար լեզվի տիրապետումը նպաստում է նաև աշխարհագրությունից, պատմությունից, գրականությունից սովորողների կոնկրետ պատկերացումների հարստացմանը: Օտար լեզվով շփումը կարգավորում է անհատի վարքը, խթանում այս կամ այն

խոսքային գործունեությունը, համագործակցությունը: Այն նպաստում է անձնավորության արժեքային կողմնորոշիչների, հայացքների և համոզմունքների ձևավորմանը, ծառայում է սովորողի վարքի և փոխհարաբերությունների, խոսքային կարողությունների զարգացմանը, ինչը դրսևորում է խոսքային էթիկայի նորմերի պահպանման միջոցով[1]:

Օտար լեզուների ուսուցման համար լեզվաբանության մեջ առկա մեթոդներից առավել հայտնի և ամենաշատ կիրառվող մեթոդները հետևյալներն են.

- ✓ ակտիվ ուսուցման մեթոդ /active learning method/
- ✓ երկլեզու մեթոդ /bilingual method/
- ✓ ուղիղ մեթոդ /direct method/
- ✓ հաղորդակցական մեթոդ /communicative method/
- ✓ քերականական-թարգմանական մեթոդ

Կարծում ենք, ակտիվ ուսուցման մեթոդը ամենաարդիականն է, քանի որ մեր օրերում առավել քան կարևորվում է լեզվի ակտիվ՝ տեսական և գործնական իմացությունը, որն էլ իր հերթին կարող է նպաստել սովորողի մոտ ստեղծագործական դրսևորումների զարգացմանը:

Պայմանականորեն դասավանդման մեթոդները կարելի է բաժանել 2 խմբի՝ ավանդական և ժամանակակից: Ավանդական ենք անվանում զննական, բացատրական այն մեթոդներին, որոնց հիմքում ընկած է գիտելիքի պարզ փոխանցումը սովորողին, իսկ ժամանակակից մեթոդական համակարգը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքի, հմտության, կարողության ձեռքբերում: Ինտերակտիվ մեթոդամանկավարժական հնարներից անգլերենի դասաժամին կարելի է կիրառել.

- ✓ ԳՈՒՍ
- ✓ Տ-աձև աղյուսակ
- ✓ Մ-աձև աղյուսակ
- ✓ Շրջագայություն անցած թեմաների էջերով
- ✓ Ձնագնդի

Նմանօրինակ հնարների կիրառումը սովորողի առաջ բացում է ստեղծագործ մոտեցումներ ցուցաբերելու լայն հնարավորություններ: Այս կերպ դասի փուլերը

[1] Գիտամեթոդական հանդես, Օտար լեզուները Հայաստանում, էջ 9:

հստակ տարանջատվում են, լրացնում միմյանց, ինչն իր հերթին նպաստում է, որ դասարանը չկորցնի ակտիվությունը:

Անգլերենի դասին շատ կարևոր է նոր նյութի հաղորդումը: Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան սովորել: Հետևաբար՝ նոր նյութը բացատրելիս ուսուցիչը պետք է ուշադիր լինի, որպեսզի չգերազանցի այդ ծավալը: Ծավալը գերազանցելու դեպքում աշակերտի աշխատանքային հիշողությունը չի կարողանում հասկանալ նոր նյութը: Այդ առումով նոր նյութ բացատրելիս շատ կարևոր է այն փոքր կտորներով բացատրելը: Նյութը ներկայացնելուց հետո անհրաժեշտ է կանգ առնել, հարցերի միջոցով պարզել՝ արդյո՞ք հասկանում են երեխաները նոր ներկայացված նյութը, ապա գտնել իրավիճակային լուծումներ:

Ստեղծագործական ունակությունների զարգացման, ինքնուրույն խոսքի ձևավորմանը խթանող ևս մի հնար է «Կենտրոններով աշխատանքը»: Ուսուցիչը Ստեղծվում են 4-5 հոգուց բաղկացած խմբեր: Խմբերը ստանում են տեքստը և մոտենում համապատասխան անվանումներով կենտրոններին: Խմբերում մասնակիցների ներգրավումը և խմբին համապատասխան կենտրոն ուղղորդելը կարող է լինել ինչպես նպատակային՝ համագործակցություն, որոշակի աշխատանքներում կարողությունների և հմտությունների խորացում, այնպես էլ պատահականության սկզբունքով:

Նախօրոք ընտրված կենտրոններն են՝

- Հետազոտողների կենտրոն
- Ստեղծագործողների կենտրոն
- Գրավոր աշխատանքի կենտրոն
- Բացահայտողների կենտրոն

Ուսուցիչը կարող է իր հայեցողությամբ ավելացնել կամ պակասեցնել կենտրոնների թիվը՝ փոխելով կամ հարմարեցնելով անունները:

Բացահայտողների կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը, կատարում նշումներ, վեր հանում վերջինիս հիմնական միտքը, ենթատեքստը և ներկայացնում ընկերներին: Հետազոտողների կենտրոնում ընդգրկված սովորողները ընթերցում են տեքստը և օգտվելով այդ պահին ձեռքի տակ եղած այլ աղբյուրներից՝ համացանց, գրականություն, փորձում են լրացուցիչ հետաքրքիր նյութեր հայթայթել տեքստի վերաբերյալ: Ստեղծագործողների կենտրոնի մասնակիցները, տեքստի առանձնահատկություններից ելնելով, փորձում են այն որևէ կերպ վերարտադրել և ներկայացնել, օրինակ՝ բեմականացում, պաստառի պատրաստում, նկարազարդում, երգ, պար և այլն, իսկ ահա գրավոր աշխատանքի

կենտրոնում ընդգրկված սովորողները ընթերցում են տեքստը և իրականացնում լեզվական կամ բառային աշխատանք՝ պահանջին համապատասխան: Նշենք , որ աշխատանքի իրականացման ժամանակ սովորողները հաղորդակցվում են բացառապես անգլերեն լեզվով: Վերջում յուրաքանչյուր կենտրոնն ամփոփում է իր կատարած աշխատանքն ու գնահատվում:

Ստացվեց, որ գիտելիքի յուրացմանը զուգահեռ այս հնարի կիրառումը սովորողի մեջ զարգացրեց մի շարք նոր հմտություններ, կարողություններ ու որակներ, որոնցից են՝

- թիմում աշխատելու կարողություն;
- անգլերենով հաղորդակցվելու հմտություն;
- թիմային աշխատանքում պատասխանատու լինելու գիտակցում;
- ինքնուրույնություն;
- նախաձեռնողականություն;
- անսպասելի իրավիճակում կողմնորոշվելու կարողություն;
- համացանցային հարթակում կողմնորոշվելու, համապատասխան տեղեկատվությունը համակարգելու կարողություն;
- փոխգործակցելու կարողություն;
- աշխատանքին ստեղծագործաբար մոտենալու հմտություն:

Որպեսզի կիրառվող մեթոդական շղթան տա դրական արդյունք, հարկավոր է կառավարելի դարձնել սովորողի ուշադրությունը, ամեն կերպ բերել վերջինիս դեպի դասը: Հայտնի է, որ տեսողությունը համարվում է հիմնական զգայարաններից մեկը, որը մարդուն տալիս է շրջապատող աշխարհի մասին տեղեկատվության 90%-ը, և իհարկե տեսողական համակարգը համարվում է ամենաբարդը մյուս զգայարանների համեմատ: Նախ, տեսողական օրգանը ոչ միայն վերարտադրում է առարկան, այն միաժամանակ հաղորդում է բազմաթիվ առնչվող տվյալներ, օրինակ՝ չափը, գույնը, գտնվելու վայրը, հեռավորությունը, սա հենց գործընթացի գործողությունն է: Այնուհետեւ բոլոր տվյալները աղավաղումներով ու սխալներով փոխանցվում են ուղեղին, որոնք ուղեղն ուղղում կամ լրացնում է արդեն հասանելի տեղեկատվության օգնությամբ[2]: Հաշվի առնելով վերը նշված պնդումը՝ բավականին կարևոր են դիդակտիկ նյութերն ու ուսումնաօժանդակ պարագաները: Ագլերենի ուսուցման շրջանակներում կարելի է օգտագործել զանազան պարագաներ: Շատ դեպքերում

[2]https://coppershop.ru/hy/mama/5-osnovnyh-chuvstv-cheloveka-kakie-organy-chuvstv-cheloveka-i-ih-funkcii.html / հոգեբանական պորտալ/

դրանք կարող են պատրաստել հենց սովորողները, որն էլ լրացուցիչ խթան կարող է հանդիսանալ ստեղծագործական կարողությունների զարգացման համար:

Այսպիսով, ակտիվացնելով սովորողների տեսաղական զգայարանը՝ ուսուցիչն ամբողջապես կենտրոնացնում է աշակերտի ուշադրությունը, նախապատրաստում վերջինիս դասին: Ուսուցիչը, անգլերենի ուսուցման շրջանակներում, շատ հաճախ կարող է ստեղծել միջառարկայական կապեր՝ թույլ տալով սովորողին խոսել իր հետաքրքրությունների մասին:

Ինչպես արդեն նշել էինք, կրթության մատչելիությունն ու հասանելիությունը հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական անկյունաքարերից են, ուստի նորագույն տեխնոլոգիաներով հեղեղված այս ժամանակաշրջանում մանկավարժի գործառույթներից է նաև սովորողին դեպի կրթություն շահագրգռելը, մոտիվացնելը, խոսուն ու գործնական օրինակներով կրթության դերն ու նշանակությունը կարևորելը, վերջինիս մոտ ինքնուրույնության, նախաձեռնողական ու ստեղծագործական ունակությունների ձևավորելը: Հենց այդ նպատակներից է բխում ուսուցչի կողմից նորագույն մեթոդներին, զանազան տեխնոլոգիական նորարարություններին դիմելն ու տարրբեր տիպի ու նշանակության դասեր իրականացնելը:

1.2 Սովորողի ինքնուրույնության ու նախաձեռնողականության զարգացումը դպրոցում՝որպես ուսուցչի առաջնային նպատակ

Գաղտնիք չէ, որ մարդն իր գիտելիքի կարողությունների ու հմտությունների հիմնական պաշարը ստանում է հանրակրթական ուսումնական հաստատությունում, որտեղ կայանում է անձի կրթական ու դաստիարակչական առանցքային գործընթացը, ուստի հենց այստեղ է, մանուկը, պատանին , դեռահասը սկսում գործել ինքնուրույն, հանդես գալ նախաձեռնողի դերում:

Նախաձեռնողականությունը նորարարությունների հանգեցնող մտքերի ակունքն է: Չէ՞ որ մի բան է տարաբնույթ մտքեր ունենալ, իսկ մեկ այլ բան՝ այդ հանճարեղ մտքերը զարգացնելն ու կյանքի կոչելը՝ ձեռնարկելով հստակ քայլեր: Սա բավականին բարդ գործընթաց է: Սակայն նախաձեռնողականության հետ սերտ կապված խրթին ուղին ունի մի շարք դրական կողմեր: Այն մեկ հարթության վրա է բերում տարբեր մարդկանց՝ միավորելով նրանց հանուն մեկ գերագույն նպատակիՆախաձեռնողականությունն է այն շարժիչ ուժը, որն առաջ է մղում ամեն մի նոր միտք դեպի իրականություն: Այն հանգեցնում է դրական տեղաշարժի՝ երկրագնդի անդադար շարժին զուգահեռ:

Պակաս կարևոր չէ ինքնուրույնությունը, որի համար անհրաժեշտ նախապայմաններ են հանդիսանում որոշման կայացումը, ներքին ազատությունը, պատասխանատվության գիտակցումը, կայացման ձգտումը, ինչին հնարավոր է հասնել գիտելիքի, մասնագիտության նախընտրության և պահանջարկի համապատասխանությամբ, արժեհամակարգի ձևավորմամբ, մատչելի տեղեկատվության ապահովմամբ և այլն: Ինքնուրույնության խթանման համար անհրաժեշտ է կարևորել համապատասխան մոտեցումներն ու սպասումները ինչպես տարիքային տարբեր փուլերում, այնպես էլ կրթական տարբեր աստիճաններում: Մանկության տարիներին ազատ և դերային խաղերի առաջադրմամբ երեխային կարելի է ուղղորդել, հետևել նրա ընտրության սկզբնական քայլերին, սովորեցնել պատասխանատվություն կրել սեփական ընտրության համար:

Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողական վարքագծի դրսևորումները դպրոցում կարելի է դիտարկել մի քանի տեսանկյունից: Եթե վերցնենք ուսուցչի ուղղակի ներգործությունը սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության գործունեության բարձրացման վրա, ապա հարկ է արձանագրել, որ դա մեծապես կախված է վերջինիս մանկավարժական ու անձնային որակներից: Իսկ ի՞նչ են իրենցից ենթադրում այդ որակները:

Ուսուցչի մասնագիտական որակներն են՝

- հանդուրժողականությունը, սեփական աշխատանքը ծրագրելու և կազմակերպելու, ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու, մասնավորապես ավանդական և ժամանակակից մեթոդները զուգորդված օգտագործելու, անվտանգ ուսումնական, հոգեբանական և դաստիարակող միջավայր ստեղծելու կարողություն;
- նորը զգալու և ընկալելու կարողություն, գենդերային անկողմնակալություն;
- քննադատական մտածելակերպ, սեփական գործունեությունը մշտապես վերլուծելու, վերանայելու, ճշգրտելու և կատարելագործելու ցանկություն և կարողություն;
- սովորողի իրավունքների պաշտպանի, երեխային համաձևավորողի, ուսումնադաստիարակչական գործընթացը երեխայի համար հեշտացնողի դերերը մասնագիտական բարձր որակով կատարելու ցանկություն և կարողություն;
- դպրոցի, դասարանի և նրանում կատարվող բոլոր իրադարձությունների և փոփոխությունների մասնակիցը լինելու պատրաստակամություն:
- կրթության ոլորտին և իր մասնագիտությանը վերաբերող հիմնախնդիրներին իրազեկ լինելու և դրանց լուծման ուղիների մասին սեփական կարծիք և ակտիվ մասնակցություն ունենալու գիտակցություն և կարողություն [3]:

Ուսուցչի անձնային որակներն են՝

- սերը երեխաների նկատմամբ , համբերություն, օբյեկտիվություն, անարդարության նկատմամբ անհանդուրժողականություն;
- քաղաքացիական օրինապաշտություն, քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները զուգորդելու գիտակցություն , հարգանք երեխայի ազատության և իրավունքների նկատմամբ ու դրանք պաշտպանելու պատրաստակամություն և կարողություն;
- մշտապես ինքնակրթությամբ և ինքնակատարելագործմամբ զբաղվելու գիտակցություն և մասնագիտական ու ընդհանուր զարգացումը պլանավորելու և իրականացնելու կարողություն[4]:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ կրթության ցանկացած ոլորտում անհնար է որևէ բարեփոխում իրականացնել առանց ուսուցչի մասնակցության և աջակցության: Ստացվում է ուսուցչն իր մարդկային ու մասնագիտական բարձր

[3] Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները», էջ 13:

[4] Նույն տեղում, էջ14:

որակներով, ժամանակակից մեթոդների կիրառությամբ, սովորողի սեռատարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ կարող է հասնել հանրակրթության պետական չափորոշչով սահմանված վերջարդյունքների դրական ելքին: Ուստի և սովորողի հաջողությունը այս համատեքստում ուղիղ համեմատական է ուսուցչի մասնագիտական և անձնային որակներին, քանզի այս պարագայում վերջինս ոչ միայն սովորեցնողի դերում է, այլ նաև համակարգողի ուղղորդողի, խորհրդատուի: Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողական վարքագծի մյուս օղակը հենց սովորողն է՝կրթական համակարգի առաջնային շահակիցը: Այս պարագայում կարևոր է, որ սովորողն ինքնուրույն գա այն գիտակցմանը, որ այսօրվա ամբարած գիտելիքը, կարողությունն ու հմտությունը իր բարեկեցիկ ապագայի հիմնասյուներն են:

Այս պարագայում խնդիրը պետք է դիտարկել այլ հարթության վրա: Սովորողն ունի հստակ իրավունքներ և պարտականություններ, որոնք պետք է քաջ գիտակցի: ՀՀ Հանրակրթության մասին օրենքի 20-րդ հոդվածը, որով սահմանվում են սովորողի իրավունքներն ու պարտականությունները, նշում է. «Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ: Սովորողն իրավունք ունի ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն[5]: Ստացվում է, որ սովորողները հաճախ շրջանցում են օրենքով նախատեսված իրենց իրավունքը՝ հիմնավորելով, որ նոր տեխնոլոգիաներն իրեն ավելի հանրամատչելի գիտելիք են տալիս, քան ուսումնական գործընթացի ընթացքում՝ ուսուցիչը:

Անշուշտ, դժվար է համաձայնվել նմանօրինակ կարծիքների հետ, այդուհանդերձ սա ունի իր օբյեկտիվ պատճառները: Հատկապես միջին և ավագ դպրոցի սովորողները, ովքեր այս կամ այն չափով տիրապետում են ՏՀՏ գործիքներին, նոր տեխնալոգիաներին, համացանցային տեղեկատվական հարթակներին, այլևս չեն բավարարվում դասարանային գիտելիքներով: Հենց նմանօրինակ խնդիրների լուծմամբ է պայմանավորված կրթական համակարգի արդիականացումը, նոր ու հետաքրքիր մեթոդների ու հնարների ներդրումը դպրոցում, ՏՀՏ դասերի, հետազոտական ու անհատական աշխատանքների իրականացումը, դասի ընթացքում: Ստացվում է, որ ուսուցիչը կառավարելի է դարձնում սովորողի մուտքը համացանց՝ դա օգտագործելով ի շահ նրա: Արդյունքում՝ սովորողը կտրվում է զանազան անբովանդակ համացանցային

[5] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք

հարթակներից՝ տեխնոլոգիան օգտագործելով տեղեկատվության հավաքագրման, ընթերցանության և այլ օգտակար նպատակներով:

Այս առումով հետաքրքիր է ուսուցման նախագծային մեթոդը, որը հետազոտական, ստեղծագործական մեթոդների համադրություն է: Մեթոդի կենտրոնում սովորողն է: Այստեղ ուսուցչի մասնակցությունը սահմանափակվում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դերով: Այստեղից կարելի է եզրահանգել, որ նախագծային մեթոդի հիմնական նպատակը սովորել սովորեցնել սովորողին՝ամեն կերպ խթանելով վերջինիս ինքնուրույն գործելու, պրպտելու, գտնելու, գիտելիքը գործնականում կիրառելու, սեփական կարծիքն ու դիրքորոշումն առանց այլ ազդակների ներգործության հայտնելու կարողության ձևավորումն ու զարգացումն է :

Վերջին տասնամյակներում նախագծային մեթոդի ներդրումը մի շարք առաջավոր երկրների կրթական համակարգերում, գալիս է փաստելու, որ նախագծային ուսուցման գերխնդիրն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման ընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ: Ցանկացած նախագծի հիմնական նպատակն է տարբեր կարողությունների ձևավորումը, որոնք ժամանակակից մանկավարժության մեջ անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ: Այն է՝գիտելիքների, հմտությունների, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև համապատասխան իրավիճակում նրանց հավաքագրում և կիրառելու պատրաստակամություն:

Նախագծային մեթոդը ստեղծում է նպաստավոր պայմաններ հետևյալ կարողությունների ու հմտությունների ձևավորման ու զարգացման համար.

- Ռեֆլեկտիվ հմտություններ;
- Որոնողական, հետազոտական հմտություններ;
- Համագործակցային հմտություններ;
- Կառավարման կարողություններ, հմտություններ;
- Շնորհանդեսների պատրաստման հմտություններ;
- Ներկայացման հմտություններ:

Օրինակ՝ միջին և ավագ դպրոցում դպրոցում անգլերենի դասաժամին կարելի է իրականացնել նախագծային ուսուցում, ինչը կնպաստի սովորողների մոտ խասքային կարողության զարգացմանը: Աշխատանքի համար խնդիր դնելով լեզվակրի հետ շփումը, հարցազրույցը՝սովորողի մոտ կարող է ավելի խորանալ հետաքրքրությունը օտար լեզվի նկատմամբ, իսկ շփման ժամանակ ճիշտ

բառամթերքի օգտագործումը, հնչյունների ճիշտ արտաբերումը, անշուշտ, կնպաստի սովորողի լեզվամտածողության և ակտիվ բառապաշարի զարգացմանը: Որպես վերջնարդյունք կարելի է նկարահանել հոլովակ: Արձանագրենք այսօրինակ նախագծային աշխատանքի արդյունքում սովորողի ձեռքբերումները.

- սովորողը հաղթահարեց օտար լեզվով տվյալ լեզվի կրողի հետ շփման ընթացքում հնարավոր վախերն ու բարդույթները;
- պասիվ բառապաշարից ակտիվ բառապաշար տեղափոխվեցին նոր բառեր;
- հարստացավ բառային պաշարը;
- սովորողը կարևորեց օտար լեզվի իմացության անհրաժեշտությունը/ եթե դժվարացավ շփման մեջ/;
- սովորեց նոր հասկացություններ;
- զրուցեց օտար լեզվով իրեն հետաքրքրող թեմաներից;
- ինքնուրույն ձևակերպեց հարցադրումներ;
- աշխատանքին մոտեցավ ստեղծագործաբար:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ավանդական դասից դուրս սովորողը հնարավորություն ունեցավ համատեղելի դարձնել սեփական հետաքրքրությունները, երազանքները ուսումնառության գործընթացի հետ: Այս համատեքստում մեթոդի կիրառումը առանձնակի ուշադրության է արժանի հատկապես միջին և ավագ դպրոցներում՝ հաշվի առնելով սովորողների սեռատարիքային առանձնահատկությունները:

Կարծում ենք, որ սովորողի սովորելու մոտիվացիան մեծապես կախված է հենց ուսուցչից, որքան ուսուցիչը խրախուսի, ցույց տա, թե որն է անգլերեն իմանալու անհրաժեշտությունը, դա հիմնավորի փաստերով, այնքան սովորողը կգա դեպի առարկան, բաց կլինի համագործակցության համար: Ուստի ուսուցիչն ամեն դասից առաջ պետք է մանրամասն կազմակերպի իր անելիքները, ձեռքի տակ ունենա դիդակտիկ նյութեր, ՏՀՏ գործիքներ, որպեսզի դասը սովորողի համար լինի հետաքրքիր ու բովանդակալից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատանքի վերլուծության արդյունքում կատարեցինք մի քանի արձանագրումներ, որոնք կամբողջացնենք, ընդհանրական տեսքի կբերենք ստորև:

Աշխատության թեման անսպառ ուսումնասիրության և վերլուծության երկարատև աշխատանք է պահանջում, այնուամենայնիվ մի բան հստակ է, եթե անգլերենի դասավանդման ընթացքում ուսուցիչը հիմնական գիտելիքների հաղորդմանը զուգահեռ նպատակ է դնում զարգացնել սովորողի պատկերավոր մտածողությունը, ինքնուրույն գործելու ու նախաձեռնողական քայլեր կատարելու կարողությունը, ապա անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ որոշակի կոնկրետ գոտում աշակերտն ունի իր հետաքրքրությունները, առանձնահատկությունները: Այս համատեքստում կրկին կցանկանանք շեշտադրել աշակերտակենտրոն ուսուցման կարևորությունը:

Սովորողի հետ հաշվի նստել, լսել նրա կարծիքը, խրախուսել վերջինիս, ստուգման ընթացքում շեշտադրել ոչ թե սխալ, այլ ճիշտ բաղադրիչը, կարծում ենք, որ նման մոտեցումը սովորողին ու դասարանը կդարձնեն հեշտ կառավարելի, և ուսուցիչն անպատճառ կհասնի հաջողության: Իսկ ահա ստեղծագործական ունակությունների զարգացումն անմիջական գործընթաց է, որը զուգահեռվում է հիմնական գիտելիքների հաղորդմանը, ուստի ուսուցիչը պետք է շփման համար ստեղծի հարմարավետ պայմաններ, որպեսզի ամեն կերպ խրախուսվի անհատի գիտակցումը, ինքնուրույնության կարևորությունը սովորողի մոտ: Անշուշտ, այս ամենից հետո կարելի է վստահաբար նշել, որ գործ կունենանք նախաձեռնող, մտածող, ստեղծագործող և ինքնուրույն դատող անհատի հետ:

Կարևորագույն բաղադրիչ է նաև բարոյահոգեբանական կայուն մթնոլորտը, ինչը թույլ կտա, որ սովորողը հնարավորինս արագ ինտեգրվի հասարակություն ու նախաձեռնողի դերում լինի, ցանկանա սովորել ու իր սովորածը կիրառել ուսումնական հաստատությունից դուրս: Այս հարցում պակաս կարևոր չէ սոցիալական միջավայրի՝ այս պարագայում դասարանի ընդհանրական դերը:

Կցանկանայինք վերահաստատել նաև ուսուցչի աշխատանքի ընթացքում վերջինիս ընտրած մեթոդական եղանակների ու առհասարակ դասի տեսակների կարևոր նշանակությունը: Զանազան մեթոդների կիրառությունը, ակտիվ, գործուն դասերի, խմբային ու գործնական աշխատանքների իրականացումը, միջառարկայական կապերի ստեղծումը, միակ արդյունավետ եղանակներն են հաջողության հասնելու համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրման ենթակա նյութի շրջանակներում կատարված վերլուծության հիման վրա հանդես գանք մի քանի առաջարկություններով.

- Անգլերենի դասի արդյունավետությունը ապահովելու համար հարկավոր է հնարավորինս շատ ոգևորել սովորողին՝ցույց տալով արդի աշխարհում անգլերենի կիրառելիության մակարդակը;
- Խմբային աշխատանքների հաճախակի կիրառությունը, կարծում ենք, կարող է զարգացնել սովորողի մոտ կոլեկտիվ մտածողություն, ուստի խրախուսում ենք նմանօրինակ առաջադրանքների կատարումը;
- Ցանկալի է, որ ուսուցիչը դասի ժամանակ շատ լսի սովորողի կարծիքը, դիքորոշումը, քանի որ դա նպաստում է և' մտածողության զարգացմանը, և լեզվական գիտելիքների համակարգմանը, և' բառային ֆոնդի հարստացմանը;
- Ցանկալի է, որ յուրաքանչյուր սովորող ունենա իր անհատական բառարանը: Արդյունքում շարունակական բնույթ կկրի բառուսուցման գործընթացը՝ նաև հենվելով տեսողական հիշողության վրա:

Կարծում ենք, որ սույն հետազոտության մեջ կատարած արձանագրումները մեծապես կօգնեն մեզ հետագա աշխատանքի ընթացքում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1 Գիտամեթոդական հանդես, Օտար լեզուները Հայաստանում:
2 Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները»:
3 https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք:
4 https://coppershop.ru/hy/mama/5-osnovnyh-chuvstv-cheloveka-kakie-organy-chuvstv-cheloveka-i-ih-funkcii.html հոգեբանական պորտալ: